

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԻԶԵՎԱՆ – 2013

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Պատմություն
2. Բուհը	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2012/13
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա և հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով հայոց լեզու, օտար լեզու, պատմություն առարկաներից գրավոր քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը պատակ ունի նախապատրաստել կրթության, գիտության, մշակույթի ոլորտների ու պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի համար Հայոց պատմության բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

- աշխատելու պատմական սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության հետ, վերլուծել և համադրել դրանցում առկա տեղեկատվությունը,
- վերլուծել և արհեստավարժ մեկնաբանել հայոց պատմության գիտական և քաղաքական հնչեղություն ունեցող հիմնախնդիրները,
- ապահովել հայոց պատմության դասընթացի բարձրորակ դա-

սավանդում ինչպես հիմնական ու ավագ դպրոցներում, այնպես էլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները	
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը. Ա1. գիտելիքներ կունենա նախնադարյան հասարակության մասին Ա2. գիտելիքներ ձեռք կբերի պատմագիտության մեթոդների, հայոց պատմության բոլոր ժամանակաշրջանների ու առանցքային խնդիրների վերաբերյալ, Ա3. գիտելիքներ կունենա հայոց պատմության սկզբնաղբյուրների և պատմագրության մասին, Ա4. գիտելիքներ կստանա համաշխարհային պատմության առավել կարևոր պատմափուլերի և մի շարք պետությունների զարգացման գործընթացի վերաբերյալ, Ա5. գիտելիքներ կունենա Հայաստանի հարակից երկրների պատմության վերաբերյալ, Ա6. կիմանա պատմական մի շարք գիտությունների /հնագիտություն, ազգագրություն/ խընդիրները, պատմագիտության համար դրանց նշանակությունն ու օգտակարությունը:	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա6 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով. Ա1-Ա6. ▪ դասախոսություններ, սեմինար պարապմունքներ, ▪ առաջադրանքներ, ռեֆերատներ, քննարկումներ ու բանավեճեր, ▪ պատմական գիտության տեսական հիմունքները դիտարկող դասընթացներ, ▪ սկզբնաղբյուրների և գիտական գրականության հետ աշխատելու մեթոդների հետ ծանոթացնելու պարապմունքներ, ▪ առաջադրանքներ, զեկուցումներ, ▪ քննարկումներ, բանավեճեր, թարգմանություններ: Գնահատման մեթոդները Ուսանողների Ա1-Ա6 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով. ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ միջանկյալ գրավոր և վերջ-

	նական բանավոր քննություններ. ▪ ստուգարքներ ▪ բակլավերական ավարտական աշխատանքի պաշտպանություն:
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. հայոց պատմության բազմաթիվ հարցերի ներկայացնելու, մեկնաբանելու և գնահատելու, Բ2. հայոց պատմության սկզբնաղբյուրների ու պատմագրության հարցերի ներկայացնելու, մեկնաբանելու և գնահատելու, Բ2. համաշխարհային պատմության մի շարք հարցեր ներկայացնելու, մեկնաբանելու և գնահատելու, Բ3. հայոց պատմության խեղաթյուրման փորձերի դեպքում միտումը կոահելու, պարզաբանելու և պատասխանելու, Բ4. համաշխարհային պատմության մի շարք հարցեր ներկայացնելու, մեկնաբանելու և գնահատելու, Բ5. Հայաստանի հարակից երկրների պատմության մի շարք հարցեր ներկայացնելու, մեկնաբանելու և գնահատելու, Բ6. տիրապետելու պատմութ-	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ9 կարողությունները հետևյալ մեթոդներով. ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ, ▪ լաբորատոր աշխատանքներ, ▪ գործնական պարապմունքներ, ▪ ուսումնական պրակտիկա, ▪ արտադրական պրակտիկա, ▪ քննարկումներ, բանավեճեր: Գնահատման մեթոդները Ուսանողների Բ1-Բ9 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Բ1-Բ9. ստուգարքներ ▪ միջանկյալ գրավոր և վերջնական բանավոր քննություններ, ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ բակլավերական ավարտական աշխատանքի պաշտպանություն:

յանը վերաբերող տեղեկատվության հավաքման, սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության մշակման, ստացված արդյունքների վերլուծության ու ընդհանրացման միջոցներին, Բ7. պատմական թեմաներով ռեֆերատներ, կուրսային ու ավարտական աշխատանքներ պատրաստելու, բանավեճեր վարելու, Բ8. ընթերցելու, հասկանալու և թարգմանելու գրաբարյան տեքստեր, Բ9. հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հայոց և համաշխարհային պատմություն, ինչպես նաև հասարակագիտություն առարկաներ դասավանդելու:	
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի. Գ1. հայերենով ձևակերպելու և ներկայացնելու բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք, Գ2. համակարգչի միջոցով օգտվելու համացանցից, հավաքելու նյութեր, շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու մասնագիտական տեքստեր, Գ3. վերլուծելու մասնագիտա-	Դասավանդման/ուսումնառության մեթոդները Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ7 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով. Գ1. ▪ գործնական պարապմունքներ, ▪ երկխոսություններ, ▪ բանավեճեր, ▪ զեկուցումների պատրաստում, ▪ կուրսային և ավարտական աշխատանքների պատրաս-

կան խնդիրները, գտնելու դրանց լուծման ճանապարհներն ու կյանքի կոչելու դրանք, Գ4. կարդալու, խոսելու, բացատրվելու օտար լեզուներով, Գ5. օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացած գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու, Գ6. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, Գ7. կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:	տում, ▪ մանկավարժական պրակտիկա, Գ2. ▪ գործնական պարապմունքներ, Գ3. ▪ դասախոսություններ, ▪ գիտական սեմինար, ▪ գիտահետազոտական աշխատանք, ▪ կուրսային և ավարտական աշխատանքների պատրաստում, Գ4. ▪ գործնական պարապմունքներ, ▪ երկխոսություններ, ▪ բանավեճեր, ▪ զեկուցումների պատրաստում, Գ5. ▪ երկխոսություններ, ▪ բանավեճեր, ▪ գիտական սեմինար, ▪ բանավոր ներկայացումներ, քննարկումներ, Գ6. ▪ դասախոսություններ, ▪ սեմինար պարապմունքներ, ▪ մանկավարժական պրակտիկա, ▪ կուրսային և ավարտական աշխատանքների պատրաստում, Գ7.
---	---

	▪ տեսական և գործնական պարապմունքներ: Գնահատման մեթոդները Ուսանողների Գ1-Գ7 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Գ1-Գ7. ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ռեֆերատների պատրաստում և զեկուցում, ▪ անհատական առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն:
--	---

11. Ծրագրի կառուցվածքը	
11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը	
Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (32 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, (10 կրեդիտ աշխատածավալով) ընդհանուր մասնագիտական (168 կրեդիտ աշխատածավալով) և այլ կրթական մոդուլներ (30 կրեդիտ աշխատածավալով): 1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս <i>Պարտադիր դասընթացներ (16 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: <i>Գամբնորական դասընթացներ (16 կրեդիտ)</i> Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը:	

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս
Պարտադիր դասընթացներ (8 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակատուղով ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

Կամրնտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը:

3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս (168 կրեդիտ)

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը (146 կրեդիտ):

4. Կրթական այլ մոդուլներ

Գուրսային աշխատանք (4 կրեդիտ)

Նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքների կատարում:

Ուսումնական պրակտիկա (2 կրեդիտ)

Ապահովում է մասնագիտական ոլորտի կիրառական հիմնախնդիրների ընկալումը. կարող է իրականացվել ՀՀ տարբեր արխիվներում, թանգարաններում (ցանկալի է նաև արտասահմանյան), գրադարաններում, ինչպես նաև պատմաճարտարապետական հուշարձաններում (այցելություններ, մասնակցություն պեղումներին):

Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)

Գործնական աշխատանք է, որի նպատակը ուսանողի մոտ գործնական հմտություններ զարգացնելն է:

Մանկավարժական պրակտիկա (4 կրեդիտ)

Մանկավարժական պրակտիկան անց է կացվում ՀՀ տարբեր հանրակրթական ու ավագ դպրոցներում:

Անփոփիչ ատեստավորում (4 կրեդիտ)

Ավարտական աշխատանքի պաշտպանություն (12 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:

11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

<i>1-ին ուստարի (1-2 կիսամյակներ)</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
<i>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i> ▪ 0302/ B01. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ) ▪ 0302/ B02. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ) ▪ 0305/ B07. Ռուսերեն -1 (4 կրեդիտ) ▪ 0305/ B08. Ռուսերեն -2 (4 կրեդիտ) ▪ 0001/ Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) <i>Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i> ▪ 0101/B02. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) ▪ 0103/B01. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ) <i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i> ▪ 0301/B17. Նախնադարյան հասարակության պատմություն (3 կրեդիտ) ▪ 0301/B16. Հին Արևելքի պատմություն (4 կրեդիտ) ▪ 0301/B 70. Մասնագիտությ-	▪ 0305/ Օտար լեզու -1 /Անգլերեն, Ֆրանսերեն/ (4 կրեդիտ) ▪ 0305/ Օտար լեզու -2 /Անգլերեն, Ֆրանսերեն/ (4 կրեդիտ)	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

յան ներածություն (2 կրեդիտ) ▪ 0301/B 54. Հայաստանի պատմական աշխարհագրություն (3 կրեդիտ) ▪ 0301/B09. Հայոց պատմություն-1 (4 կրեդիտ) ▪ 0301/B47. Տրամաբանություն (2 կրեդիտ) ▪ 0301/B24. Ռուսաստանի պատմություն-1 (4 կրեդիտ) ▪ 0301/B10. Հայոց պատմություն-2 (4 կրեդիտ) ▪ 0301/B18. Հին Հունաստանի և Հռոմի պատմություն (5 կրեդիտ) ▪ 0301/B31. Ազգագրության հիմունքներ (2 կրեդիտ) ▪ 0302/B27. Հայ գրականության պատմություն (3 կրեդիտ)		
---	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>2-րդ ուստարի (3-4 կիսամյակներ)</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս ▪ 0301/B05. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ) ▪ 0001/B01. Ֆիզդաս-	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս ▪ 0305/ Ռուսաց լեզու-3 կամ օտար լեզու -3/ (4 կրեդիտ) ▪ 0201/B01. Տնտեսագիտություն (2 կրեդիտ) կամ	Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

տիարակություն (0 կրեդիտ) <i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i> ▪ 0301/B19. Միջին դարերի պատմություն-1 (3 կրեդիտ) ▪ 0301/B25. Ռուսաստանի պատմություն-2 (4 կրեդիտ) ▪ 0301/B11. Հայոց պատմություն-3 (4 կրեդիտ) ▪ 0302/B15. Գրաբար-1(4 կրեդիտ) ▪ 0301/B30. Հնագիտության հիմունքներ և Հայաստանի հնագիտություն (5 կրեդիտ) ▪ 0302/B27. Գրաբար-2 (4 կրեդիտ) ▪ 0301/B20.Միջին դարերի պատմություն-2 (4 կրեդիտ) ▪ 0301/B26. Ռուսաստանի պատմություն-3 (4 կրեդիտ) ▪ 0301/B12. Հայոց պատմություն-4 (4 կրեդիտ) ▪ 0303/B04. Հոգեբանություն (2 կրեդիտ) <i>Կրթական այլ մոդուլներ</i> ▪ Ուսումնական	▪ 0301/B03. Քաղաքագիտություն (2 կրեդիտ) կամ ▪ 0301/B04. Իրավագիտություն (2 կրեդիտ) ▪ 0202/B01. Մշակութաբանություն (2 կրեդիտ) կամ ▪ 0301/B06. Կրոնների պատմություն (2 կրեդիտ) <i>Ընդհանուր մաթեմատիկական և քնագիտական կրթամաս</i> ▪ 0102/B01. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ (2 կրեդիտ) կամ ▪ 0101/B01. Մաթեմատիկայի հիմունքներ (2 կրեդիտ) <i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i> ▪ 0301/B37. Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B38. Պառլամենտարիզմի պատմություն (4 կրեդիտ) կամ	
--	---	--

պրակտիկա (2 կրե- դիտ) ■ Կուրսային աշխա- տանք (2 կրեդիտ)	■ 0301/B39. Արդի դա- րաշրջանի քաղաքա- կան կուսակցություն- ներ (4 կրեդիտ)	
--	---	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ

3-րդ ուստարի /5-6 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒ- ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս ■ 0001/ Ֆիզդաստիարակությոն (0 կրեդիտ) Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս ■ 0001/B05. Քաղաքացիական պաշտպանություն (2 կրեդիտ) ■ 0001/B06. Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (2 կրեդիտ) Ընդհանուր մասնագիտական կրթամաս ■ 0301/B27. Ռուսաստանի պատմություն-4 (5 կրեդիտ) ■ 0301/B29. Հայ ազգագրություն (4 կրեդիտ) ■ 0301/B21. Նոր պատմություն-1(6 կրեդիտ) ■ 0301/B50. Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն (4 կրեդիտ)		Առնվազն 60 կրեդիտի կուտակում:

▪ 0301/B13. Հայոց պատմություն-5 (5 կրեդիտ) ▪ 0301/B32. Հայոց պատմության աղբյուրագիտություն (4 կրեդիտ) ▪ 0301/B14. Հայոց պատմություն-6 (4 կրեդիտ) ▪ 0301/B28. Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն (6 կրեդիտ) ▪ 0303/B21. Մանկավարժություն (4 կրեդիտ) ▪ 0301/B22. Նոր պատմություն-2 (5 կրեդիտ) ▪ 0301/B34. Թանգարանագիտություն և արխիվագիտություն (3 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ ▪ Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ) ▪ Կուրսային աշխատանք (2 կրեդիտ)		
---	--	--

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>4-րդ ուստարի (7-8 կիսամյակներ)</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
Ընդհանուր մասնագիտական կրթամաս ▪ 0301/B23. Նորագույն պատմություն (8 կրեդիտ) ▪ 0301/B35.	▪ 0301/B40. Առաջավոր Ասիայի և Կովկասի քաղաքակրթություն, Այսրկովկասի հնագիտություն (4 կրեդիտ) - կամ ▪ 0301/B51. Դեմոկրատիայի պատմություն-1(4 կրեդիտ)	Առնվազն 240 կրեդիտի կուտակում Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամա-

Պատմության դասավանդման մեթոդիկա (4 կրեդիտ) ▪ 0301/B33. Հայոց պատմության պատմագրություն (4 կրեդիտ) ▪ 0301/B36. Վերաստանի և Ադրբեջանի պատմություն (4 կրեդիտ) ▪ 0301/B45. Փիլիսոփայության պատմություն (4 կրեդիտ) ▪ 0202/B32. Հայ և համաշխարհային արվեստի պատմություն (4 կրեդիտ) Կրթական այլ մոդուլներ ▪ Ամփոփիչ տեստավորում (4 կրեդիտ) ▪ Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)	կամ ▪ 0301/B41. Կովկասի տարածաշրջանի էթնոքաղաքական պատմություն (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B52. Հռոմեական ժառանգությունը և եվրոպական հանրույթը (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B15. Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն (4 կրեդիտ) ▪ 0301/B72. Անցումային շրջանի ազգաբանություն /4 կրեդիտ/ կամ ▪ 0301/B53. Դեմոկրատիայի պատմություն-2 (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B50. Դրամագիտություն և վիմագրություն (4 կրեդիտ) կամ ▪ 0202/B33. Հին Հայաստանի արվեստ (4 կրեդիտ) կամ ▪ 0301/ B 71. Հայոց կենսապահովման մշակույթ ▪ 0301/B46. Աշխարհաքաղաքականություն (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B43. Թուրքիայի պատմություն (4 կրեդիտ)	նախահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00
---	--	---

	կամ ▪ 0301/B53. Իրանի պատմություն (4 կրեդիտ) կամ ▪ 0301/B42. Հունաստանի պատմություն (4 կրեդիտ)	
11. 2. Պրակտիկայի հնարավորությունները և պայմանները Պրակտիկաները կազմակերպվում են պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ՀՀ արխիվներում (թանգարաններում ցանկալի է նաև արտասահմանյան), գրադարաններում: Ինչպես նաև, Երևանի, Տավուշի մարզի և Հայաստանի տարբեր մարզերում գտնվող հայ ճարտարապետության և քանդակագործության ստեղծագործությունների միջավայրում: Մանկավարժական պրակտիկան անց է կացվում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերի ավագ և հանրակրթական դպրոցներում:		
11.3. Ավարտական ատեստավորումներ		
Ուստարի	Անվանումը	
4-րդ ուստարի	Ավարտական ամփոփիչ քննություն Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն	

12. Ուսումնական պլանի քարտեզը Կցված է

13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ Տե՛ս <<ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք>>, Երևան, 2012 թ., էջ 11-19:

14. Ապագա կարիերայի հնարավորությունները «Պատմություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել դպրոցներում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, թանգարաններում, արխիվներում, ռադիոյի, հեռուստատեսության և մամուլի ասպարեզներում, տուրիզմի ոլոր-
--

տում, ՀՀ Կրթության և գիտության, Մշակույթի նախարարություններում, Ազգային անվտանգության ծառայությունում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.

- պատմության, հասարակագիտության ուսուցիչ

Թանգարաններում.

- էքսկուրսավար,
- գիտաշխատող,
- բաժնի վարիչ,
- տնօրեն:

Արխիվներում.

- գիտաշխատող,
- բաժնի վարիչ:

Ռադիո, հեռուստատեսություն, մամուլ.

- լրագրող, վերլուծաբան

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

- ստորին և միջին օղակների ծառայող:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- էլեկտրոնային ռեսուրսներ:

16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը

- Պետական կրթական չափորոշիչ «Պատմություն» մասնագիտությամբ
- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ.

17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ

18. Լրացուցիչ տեղեկատվություն

Պետք է նկատի ունենալ, որ ծրագրի մասնագիտը տալիս է ծրագրի հիմնական բնութագրերի համառոտ նկարագրությունը և այն կրթական վերջնարդյունքները, որոնք ենթադրվում է, որ ձեռք կբերի ուսանողը, եթե նա լիարժեք կերպով օգտվի ծրագրի ընձեռած ուսումնառության հնարավորություններից: Ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն կարելի է գտնել ԵՊՀ-ի ԻՄ-ի դասընթացների տեղեկագրքում:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ	
Ա1	գիտելիք նախնադարյան հասարակության մասին	Գ1	հայերենով ձևակերպել և ներկայացնել բանավոր ու գրավոր տրամաբանված խոսք
Ա2	գիտելիք պատմագիտական մեթոդների, հայոց պատմության բոլոր ժամանակաշրջանների ու առանցքային խնդիրների վերաբերյալ	Գ2	համակարգչի միջոցով օգտվել համացանցից, հավաքել նյութեր, շարադրել, խմբագրել, մշակել, պահպանել և փոխանցել մասնագիտական տեքստեր
Ա3	գիտելիք հայոց պատմության սկզբնաղբյուրների և պատմագրության վերաբերյալ	Գ3	վերլուծել մասնագիտական խնդիրները, գտնել դրանց լուծման ճանապարհներն ու կյանքի կոչել դրանք
Ա4	գիտելիք համաշխարհային պատմության առավել կարևոր պատմափուլերի և մի շարք պետությունների զարգացման գործընթացի մասին	Գ4	կարդալ, խոսել, բացատրվել օտար լեզուներով
Ա5	գիտելիք Հայաստանի հարակից երկրների պատմության վերաբերյալ	Գ5	օգտագործելով մասնագիտական և լայլ դասընթացներից ստացած գիտելիքները՝ բանախոսել ու բանավիճել
Ա6	իմացություն պատմական մի շարք գիտությունների խնդիրների, պատմագիտության համար դրանց նշանակության ու օգտակարության մասին	Գ6	պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը

		Գ7	կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել առաջին բուժօգնություն
Բ. Գործնական մասնագիտական կարողություններ			
Բ1	հայոց պատմության բազմաթիվ հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում	Բ6	տիրապետել պատմությանը վերաբերող տեղեկատվության հավաքման, սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության մշակման, ստացված արդյունքների վերլուծության ու ընդհանրացման միջոցներին
Բ2	հայոց պատմության սկզբնաղբյուրների ու պատմագրության հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում	Բ7	պատմական թեմաներով ռեֆերատների, կուրսային ու ավարտական աշխատանքների պատրաստում, բանավեճերի վարում
Բ3	հայոց պատմության խեղաթյուրման փորձերի դեպքում միտման կոռուցում, պարզաբանում և պատասխանում	Բ8	կկարողանա ընթերցել, հասկանալ և թարգմանել գրաբարյան տեքստեր
Բ4	համաշխարհային պատմության մի շարք հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում	Բ9	հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հայոց և համաշխարհային պատմություն, ինչպես նաև հասարակագիտություն առարկաների դասավանդում
Բ5	Հայաստանի հարակից երկրների պատմության մի շարք հարցերի ներկայացում, մեկնաբանում և գնահատում		

Ծրագրի կրթական վերջնարդյունքները																				
Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Բ9	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7
Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից:																				
1	3, 4	3, 4	4	4	1, 2	3, 4	3, 4	4	4	3, 4	2, 3, 4	2	4	2, 3, 4	1, 2	3, 4	2	3, 4	1, 2, 3, 4	3

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																							
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Բ9	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7		
Հայոց լեզու և գրականություն	2+2																+	+			+				
Ռուսերեն	4+4																	+		+	+				
Օտար լեզու	4+4+(4)																	+		+	+				
Փիլիսոփայական հիմունքներ	4																		+		+				
Ֆիզդաստիարակություն	0																								
Տնտեսագիտություն	2																				+				
Քաղաքագիտություն	2																				+				
Իրավագիտություն	2																				+				
Մշակութաբանություն	2																				+				
Կրոնների պատմություն	2																				+				
Համակարգչից օգտվելու հմտություններ	2																	+							

Էկոլոգիայի բնապահ- պանության հիմունքներ	2																			+		
Քաղաքացիական պաշտ- պանություն	2																					+
Արտակարգ իրավիճակ- ներում բնակչության ա- ռաջին բուժօգնություն	2																					+
Բնագիտության ժամա- նակակից կոնցեպցիաներ	2																			+		
Մաթեմատիկայի հի- մունքներ	2																			+		
Նախնադարյան հասա- րակության պատմություն	3	+																				
Հին Արևելքի պատմությու- ն	4				+					+		+	+		+			+			+	
Մասնագիտության ներա- ծություն	2		+	+					+				+				+				+	
Հայաստանի պատմական աշխարհագրություն	3					+		+		+				+								+
Հայրց պատմություն-1	4		+	+		+		+	+	+		+	+	+		+			+		+	+
Տրամաբանություն	2															+		+				
Ռուսաստանի պատմությու- ն-1	4				+	+		+			+	+	+	+		+			+			+
Հայրց պատմություն-2	4		+	+		+		+	+	+		+	+	+		+			+		+	+
Հին Հունաստանի և Հռոմի պատմություն	5				+	+						+	+		+			+		+	+	

Ազգագրության հիմունք-ներ	2	+				+			+										
Հայ գրականության պատմություն	3			+			+							+				+	
Միջին դարերի պատմու-թյուն-1	3				+	+				+	+	+	+		+			+	+
Ռուսաստանի պատմու-թյուն-2	4				+	+		+			+	+	+	+		+			+
Գրաբար – 1	4			+										+					
Գրաբար - 2	4			+										+					
Հնագիտության հիմունք-ներ և Հայաստանի հնա-գիտություն	5			+	+		+	+	+	+	+	+	+					+	
Միջին դարերի պատմու-թյուն-2	4				+	+		+			+	+	+	+		+			+
Ռուսաստանի պատմու-թյուն-3	4				+	+		+			+	+	+	+		+			+
Հայոց պատմություն-4	4			+	+		+		+	+	+	+		+			+		+
Հոգեբանություն	2																+		
Հայ քաղաքական կու-սակցությունների պատ-մություն	4			+	+		+		+	+	+		+	+		+			+
Պատվամենտարիզմի պատմություն	4				+	+				+		+							

Արդի դարաշրջանի քա- ղաքական կուսակցու- թյուններ	4				+	+		+			+	+	+	+		+			+			+	
Ռուսաստանի պատմութ- յուն-4	5				+	+		+			+	+	+	+		+			+		+	+	
Հայ ազգագրություն	4			+				+		+												+	
Նոր պատմություն-1	6				+	+		+			+	+	+	+		+			+		+	+	
Համաշխարհային պատ- մության աղբյուրագիտու- թյուն	4				+	+					+												
Հայոց պատմություն-5	5		+	+		+		+	+	+		+	+	+		+			+		+	+	
Հայոց պատմության աղբ- յուրագիտություն	4		+	+		+		+	+	+		+	+									+	
Հայոց պատմություն-6	4		+	+		+		+	+	+		+	+	+		+			+		+	+	
Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն	6				+	+		+			+	+	+	+		+			+		+	+	
Մանկավարժություն	4																+					+	
Նոր պատմություն-2	5				+	+		+			+		+	+		+			+		+	+	
Թանգարանագիտություն և արխիվագիտություն	3			+									+										
Նորագույն պատմություն	8				+	+		+			+		+	+		+			+		+	+	
Պատմության դասա- վանդման մեթոդիկա	4							+	+								+				+		
Հայոց պատմության պատմագրություն	4		+	+				+	+	+			+	+					+		+		

Վրաստանի և Ադրբեջանի պատմություն	4		+		+		+		+		+									
Հայ և համաշխարհային արվեստի պատմություն	4				+					+										
Ասիայի և Կովկասի քաղաքակրթություն, Այսրկովկասի հնագիտություն	4	+	+	+	+	+		+	+	+	+	+		+				+	+	+
Դեմոկրատիայի պատմություն-1-2	4+4				+	+				+	+									
Կովկասի տարածաշրջանի էթնոքաղաքական պատմություն	4		+			+		+		+		+							+	
Հռոմեական ժառանգությունը և եվրոպական հանրույթը	4				+	+					+	+								
Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն	4		+	+	+	+		+		+	+	+		+			+		+	
Դրամագիտություն և վիմագրություն	4		+	+				+	+											
Հին Հայաստանի արվեստ	4		+					+												
Աշխարհաքաղաքականություն	4																		+	
Թուրքիայի պատմություն	4		+			+		+				+								
Իրանի պատմություն	4		+			+		+				+								

[illegible]

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՄԸՆԹԱՑՆԵՐ

0302/B01	Հայոց լեզու և գրականություն-1	2 կրեդիտ
շաբաթական 2 ժամ	8/24/0	
I կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ժամանակակից հայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության համակարգերի ուսուցումը նպատակաուղղել խոսքի մշակույթի զարգացմանը, գրավոր և բանավոր խոսք կառուցելու հմտությունների ամրակայմանը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները ▪ հարուստ բառապաշար /ընդհանուր համագործածական և մասնագիտական/ <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ արժևորելու 5-րդ դարի հայ պատմագրությունը, միջնադարյան քնարերգությունը և վերլուծելու դրանց լավագույն նմուշները ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ անսխալ ուղղագրությամբ գրելու, բանավոր և գրավոր խոսքում կիրառելու ուղղախոսական բոլոր կանոնները		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1՝ Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: Հայ հին գրականություն: Թեմա 2՝ Հնչյունաբանություն: Հայերենի հնչյունական համակարգը: Ուղղագրություն և ուղղախոսություն: Թեմա 3՝ Բառագիտություն: Ստուգաբանություն, իմաստաբանություն, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն: Թեմա 4՝ Ոճերի դասակարգումը: Հայ միջնադարյան գրականություն:		
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թելադրության դրական գնահատականի դեպքում՝ եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:		

Հիմնական գրականության ցանկը

1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:
2. Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն/, Երևան, 1982:

0304/B07	Ռուսերեն-1	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
I կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի՝ ռուսաց լեզվի համակարգի իմացությունը, զարգացնել բանավոր խոսքի և երկխոսության կառուցման ունակությունները՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ ռուսաց լեզվի քերականական կառուցվածք <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ գրագիտորեն կազմելու իր բանավոր խոսքը, ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ վերլուծելու, մեկնաբանելու և վերարտադրելու գեղարվեստական և ճանաչողական բնույթի տեքստ:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1՝ Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Թեմա 2՝ Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Թեմա 3՝ Բառագիտություն. Բառիմաստ, միիմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ, հոմանիշներ և հականիշներ, համանուններ և հարանուններ: Թեմա 4՝ Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Թեմա 5՝ Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակցման ուղղվածության:		

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Афанасьева Т.А., Маркосян Е.А. Русский язык. Пособие для студентов – биологов тексты по специальности. Изд-во ЕГУ, Ереван, 2008.
2. Русский язык. Для факультетов с армянским языком обучения. Под ред. Мкртчяна Л.М., изд-во Ереванского университета. Ереван, 2004.

0305/B08.	Ռուսերեն-2	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
2 կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը՝ հաղորդակցվելու համար լեզվական տարբեր ոլորտներում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքների կանոնների, մասնագիտական լեզվի տերմինաբանության վերաբերյալ, Ունակ կլինի. <i>✓ (բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ կատարելու մասնագիտական տեքստի շարահյուսական վերլուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկություններից, ▪ վերլուծելու և վերարտադրելու մասնագիտական տեքստեր, <i>✓ (ընդհանրական կարողություններ)</i> ▪ կկարողանա թարգմանել մասնագիտական տեքստը ռուսերենից հայերեն և հակառակը:		
Համոռոտ բովանդակությունը Թեմա 1՝ Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: Թեմա 2՝ Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական		

կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: Թեմա 3՝ Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Թեմա 4՝ Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: Թեմա 5՝ Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:
Հիմնական գրականության ցանկը 1. Афанасьева Т.А., Маркосян Е.А. Русский язык. Пособие для студентов – биологов тексты по специальности. Изд-во ЕГУ, Ереван, 2008. 2. Русский язык. Для факультетов с армянским языком обучения. Под ред. Мкртчяна Л.М., изд-во Ереванского университета. Ереван, 2004.

0302/B02	Հայոց լեզու և գրականություն-2	2 կրեդիտ
շաբաթական 2 ժամ	8/24/0	
II կիսամյակ	հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> - ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների վերաբերյալ <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - ճիշտ կազմելու քերականական ձևերը, գործնականում կիրառե-		

լու ձևաբանական և շարահյուսական լեզվառճական հնարները. ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ վարելու երկխոսություն և բանավեճ
Համատոտ բովանդակությունը Թեմա 1՝ Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: Թեմա 2՝ Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: Հայ նոր գրականություն: Թեմա 3՝ Շարահյուսություն. Պարզ նախադասություն: Հայ նորագույն գրականություն: Թեմա 4՝ Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: Ուղղակի և անուղղակի խոսք: Ժամանակակից հայերենի կետադրությունը:
Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատոմսը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:
Հիմնական գրականության ցանկը 1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009: 2. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու /ձևաբանություն/, Երևան, 2004:

0301/B05.	Փիլիսոփայության հիմունքներ	4 կրեդիտ
Հաբաթական 4 ժամ	48/0/16	
IV կիսամյակ	հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված մարդուն և մասնագետին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն - աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, Ունակ կլինի ✓ (բուն մասնագիտական կարողություններ) - Տարբերակելու և հասկանալու ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը ✓ (ընդհանրական կարողություններ) - վերլուծելու և ամբողջական պատկերացում կազմելու արդի քաղաքակրթական, քաղաքական-մշակութային և մարդաբանական պատկերացումների, տեխնածին քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների մասին:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1՝ Փիլիսոփայության առարկան: Թեմա 2՝ Կեցություն և մատերիա: Թեմա 3՝ Դիալեկտիկա: Թեմա 4՝ Բնություն: Թեմա 5՝ Մարդ և պրակտիկա: Թեմա 6՝ Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7՝ Գիտություն: Թեմա 8՝ Հասարակություն: Թեմա 9՝ Մշակույթ: Անձ: Ապագա:		
Գնահատման մեթոդները և չափանիշները Քննությունն անցկացվում է բանավոր՝ անցած նյութի հիման վրա:		
Հիմնական գրականության ցանկը - Սարգսյան Ա., Փիլիսոփայության հիմունքներ: Երևան, 2009: - Հակոբյան Ս. Փիլիսոփայության հիմունքները: Երևան, 2008:		

0001/B01	Ֆիզդաստիարակություն	0 կրեդիտ
շաբաթական 2 ժամ	0/128/0	
I կիսամյակ- IV կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն.
Ունակ կլինի.
✓ (բուն մասնագիտական կարողություններ)
✓ (ընդհանրական կարողություններ)
Համառոտ բովանդակությունը.
Գնահատման մեթոդները և չափանիշները.
Հիմնական գրականության ցանկը.

ԿԱՄՐՆՏՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

0305/B04	Անգլերեն -1	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
I կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում (ունկնդրել, կարդալ, խոսել, գրել):		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ հարուստ ակտիվ բառապաշար <i>Ունակ կլինի.</i> ✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ վերլուծելու անգլերենի քերականության՝ հատուկ բարդություն ունեցող երևույթները ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ հաղորդակցվելու անգլերեն, բանավոր և գրավոր խոսք կառուցելու:		
Համառոտ բովանդակությունը Թեմա 1՝ Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչույթների-		

րի արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: **Թեմա 2՝** Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): **Թեմա 3՝** Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջուն): **Թեմա 4՝** Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երագանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքն անցկացվում է անցած նյութի բանավոր հարցման ձևով: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Headway Elementary. Student Book, Workbook. John and Liz Soars. 2009.

0305/B01.	Ֆրանսերեն -1	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
I կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է թարմացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ Ֆրանսերենի ձևաբանության և շարահյուսության իմացություն <i>Ունակ կլինի.</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ Ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները: ▪ հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները՝ դադար, շեշտ, հիմնական հնչերանգ,		

մեղեդային եզրափակում, տեմպ, ճիշտ հնչերանգով արտասանելու հմտություններ ✓ (ընդհանրական կարողություններ) ■ նախադասությունը ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու կարողություն
Համառոտ բովանդակությունը Թեմա 1՝ Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2՝ Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3՝ Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4՝ Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Թեմա 5՝ Քանակական և դասական թվական: Քանակական թվականի գործածությունը: Թեմա 6՝ Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:
Գնահատման մեթոդները և չափանիշները Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկը 1. Մոժե: Ֆրանսերեն: 1-ին հատոր: 2. Попова. Учебник. Москва.

0305/B05.	Անգլերեն -2	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
II կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների լեզվական գիտելիքները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր մասնագիտական բառապաշարին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ■ անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ:		

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ընկալելու ունկնդրած /կարդացած նյութի հիմնական բովանդակությունը, տարանջատել հիմնական տեղեկատվությունը երկրորդականից/

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- համակարգելու նախորդ փուլում յուրացրած քերականական նյութը՝ հիմնվելով հաղորդակցական սկզբունքի վրա

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1՝ Ուղղախոսություն, ուղղագրություն. անգլերենի արտասանական առանձնահատկությունները, տարբեր տիպի նախադասությունների հնչերանգն ու խոսքի առոգանությունը, ուղղագրական հիմնական կանոնները: **Թեմա 2՝** Բառապաշար, բառակազմություն. վերարտադրողական և ընկալողական բառապաշարի ընդլայնում: **Թեմա 3՝** Քերականություն. նախորդ փուլում յուրացրած քերականական նյութի (անվանական և բայական կարգերի) համակարգում հաղորդակցական սկզբունքի հիման վրա: **Թեմա 4՝** Հանրամշակութային գիտելիքներ անգլախոս երկրների մշակույթի և լեզվակիր ժողովուրդների հասարակական կյանքի մասին: **Թեմա 5՝** Մասնագիտական լեզվի տերմինաբանական համակարգ:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքն անցկացվում է անցած նյութի բանավոր հարցման ձևով: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

Հիմնական գրականության ցանկը

1. Headway Elementary. Student Book, Workbook. John and Liz Soars. 2009.
2. Apresyan M., Bagiryan D. A Glimpse into Science. 2006.

0305/B02.	Ֆրանսերեն -2	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
II կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա		

ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ֆրանսերեն լեզվով մասնագիտական աղբյուրներից օգտվելու կարողություն

Ունակ կլինի

- լսելով հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ)
- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
 - ճիշտ և սահուն արտասանությամբ կարդալ և կազմել ձևակերպել նախադասություններ
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
 - գրույց վարել անցած թեմաներով

Համառոտ բովանդակությունը

Թեմա 1՝ Գոյական անուն, միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Les funeraillles, les entrailles. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը (des cour- fleurs, des casse-croute և այլն): **Թեմա 2՝** Ածականի իմաստի փոփոխությունը կախված նրա դիրքից՝ սո homme grand-սո grand homme. Անորոշ դերանվանական ածականներ: **Թեմա 3՝** Հարաբերական դերանուններ, դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ՝ qui, que, dont, ou, lequell և այլն (դասակարգում): **Թեմա 4՝** Պայմանական եղանակ, կազմությունը և գործածությունը համադաս և ստորադասական նախադասություններում: Ըղձական եղանակ: Սահմանական եղանակը ուրիշի ուղղակի խոսքում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգաքնն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Biologie 6 – sciences et techniques biologiques. i.S.B.N.2863-11-139-6. Editeurs Pierre Bordas et fils (France).
2. Առաքելյան Կ. Textes de biologie. i.S.B.N.99930-4-384-2. Երևան, 2005:

0305/B06	Անգլերեն -3	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
III կիսամյակ	հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է նոր, առավել հագեցած բառապաշարի և գիտելիքների ներմուծումը, մասնագիտական բառապաշարի խորացված ուսումնասիրությունը և մասնագիտական գրականությունից օգտվելու հմտությունների զարգացումը՝ զուգահեռաբար խորացնելով ուսանողների լեզվական հմտությունները և հաղորդակցական կարողությունները լեզվախոսքային բոլոր ոլորտներում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
<i>Գիտելիք և իմացություն</i>		
▪ հասկանալու և ամբողջապես ըմբռնելու լսված նյութի հիմնական բովանդակությունը		
<i>Ունակ կլինի.</i>		
✓ (բուն մասնագիտական կարողություններ) ▪ անգլերեն բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտություններ, ✓ (ընդհանրական կարողություններ) ▪ թարգմանելու մասնագիտական տեքստեր հայերենից անգլերեն և հակառակը,		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1՝ Բառապաշար (ռեցեպտիվ և պրոդուկտիվ)՝ հոմանիշներ, հականիշներ, նոր բառակապակցություններ: Թեմա 2՝ Քերականություն. բայի անդեմ ձևեր, մոդալ բայերի երանգավորված իմաստները և դրանց կիրառումը բանավոր և գրավոր խոսքում, բայի կրավորական սեռը: Թեմա 3՝ Գործարար նամակագրություն՝ համառոտագրություն, ինքնակենսագրություն (CV), դիմում: Թեմա 4՝ Առաջարկվող թեմաներ՝ «Մերունդների հակասություն», «Հոգևոր և մշակութային արժեքներ», «21-րդ դար՝ նոր մարտահրավերներ», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և նրանց դերը մեր կյանքում», «Հայրենիք և հայրենասիրություն» և այլն:		
Գնահատման մեթոդները և չափանիշները		
Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 6 և 7 միավոր:		
Հիմնական գրականության ցանկը		
1. Headway Pre-Intermediate. Student Book, Workbook. John and Liz Soars. 2009.		
2. Apresyan M., Bagiryan D. A Glimpse into Science. 2006.		

0305/B09	Ռուսերեն-3	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
III կիսամյակ	հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է՝ զարգացնել ուսանողի լեզվական հմտությունները, մասնագիտական լեզվով և մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու կարողությունները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		
Գիտելիք և իմացություն		
մասնագիտական լեզվի տերմինաբանային համակարգի վերաբերյալ,		
Ունակ կլինի.		
✓ (բուն մասնագիտական կարողություններ)		
- մեկնաբանելու և վերարտադրելու մասնագիտական տեքստեր, - ինքնուրույն կազմելու կապակցված տեքստ մասնագիտական թեմայով, - կազմելու զեկուցումներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,		
✓ (ընդհանրական կարողություններ)		
թարգմանելու տարբեր բարդության մասնագիտական տեքստեր		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1՝ Ոճաբանություն. լեզվի գիտական ոճ, գիտական ոճին բնորոշ շարահյուսական կառուցվածքներ, գիտական կապակցված տեքստի կառուցման միջոցներ՝ բառային, ձևաբանական և շարահյուսական: Թեմա 2՝ Ուղղագրություն. ուղղագրության հիմնական կանոնները: Թեմա 3՝ Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրներ. Թեմա 4՝ Գիտական զեկուցումների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշները		
Քննությունը բանավոր է՝ 20 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց. 1-ին և 2-րդ հարցերը՝ 6-ական միավոր, 3-րդ հարցը /մասնագիտական տեքստի թարգմանություն հայերենից ռուսերեն/՝ 8 միավոր:		
Հիմնական գրականության ցանկը		
1. Афанасьева Т.А., Маркосян Е.А. Русский язык. Пособие для студентов – биологов тексты по специальности. Изд-во ЕГУ, Ереван,		

2008.

2. Русский язык. Для факультетов с армянским языком обучения. Под ред. Мкртчяна Л.М., изд-во Ереванского университета. Ереван, 2004.

0304/B03	Ֆրանսերեն -3	4 կրեդիտ
շաբաթական 4 ժամ	0/64/0	
III կիսամյակ	հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:		
Դասընթացի ավարտին ուսանողը.		
Գիտելիք և իմացություն		
իր մասնագիտական հիմնական տերմինների նշանակությունը, ներառյալ երկրորդ կիսամյակում սովորած 300 միավոր տերմինոլոգիան,		
Ունակ կլինի.		
✓ (բուն մասնագիտական կարողություններ) - առանց բառարանի կարդալ միջին բարդության մասնագիտական տեքստեր,		
✓ (ընդհանրական կարողություններ) - առանց բառարանի կարդալ և վերաշարադրել միջին բարդության հասարակական-քաղաքական տեքստեր		
Համառոտ բովանդակությունը.		
Թեմա 1՝ Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում քերականորեն (հոդի և այլ մասնիկների օգնությամբ), ձևաբանորեն (բառի ձևի փոփոխություն, ածանցներ), բառային (բառի տարբեր ձևեր): Երկու սեռ ունեցող գոյականներ: Թեմա 2՝ Եղանակավորման քերականական արտահայտությունը, ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը՝ indicatif (սահմանական եղանակ), conditionnel (պայմանական եղանակ), subjonctif (ըղձական եղանակ), imperatif (հրամայական եղանակ): Թեմա 3՝ Նախդիրների համակարգային դասակարգում, տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:		
Գնահատման մեթոդները և չափանիշները.		

Քննությունը անցկացվում է բանավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց: Առաջին առաջադրանքն է՝ կարդալ, թարգմանել անծանոթ տեքստը մասնագիտական թեմայով, երկրորդը՝ մեկնաբանել ծանոթ մասնագիտական տեքստը. երրորդը՝ խոսել մասնագիտական ոլորտի վերաբերյալ:

Հիմնական գրականության ցանկը.

1. Grammaire progressive du français (niveau débutant), P. 2004
2. H. Renner, U. Renner, G. Tempesta – La français de l'hôtellerie et de la restauration. Clé internationale, 1992

0301/B06	Կրոնների պատմություն	2 կրեդիտ
շաբաթական 2 ժամ	32/0/0	
III կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դեմոֆինացիաների վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. <i>Գիտելիք և իմացություն</i> ▪ ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները և տոնածիսական համակարգը կիմանա դիցաբանական համակարգերի պատմությունն ու տեսությունը: <i>Ունակ կլինի</i> ✓ <i>(բուն մասնագիտական կարողություններ)</i> ▪ հասկանալու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները. ✓ <i>(ընդհանրական կարողություններ)</i> ▪ կկարողանա համեմատական վերլուծության ենթարկել և իրարից տարբերել հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբա-		

նական համակարգերը:		
Համառոտ բովանդակությունը		
Թեմա 1՝ Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա 2՝ Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Թեմա 3՝ Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա 4՝ Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Թեմա 5՝ Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Թեմա 6՝ Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա 7՝ Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: Թեմա 8՝ Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: Թեմա 9՝ Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: Թեմա 10՝ Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:		
Գնահատման մեթոդները և չափանիշները		
Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 3 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:		
Հիմնական գրականության ցանկը		
1. Ալիշան Ղ. Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երեւան, 2002: 2. История религии (учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) Т. 1-2. М., 2007. 3. Мифы народов мира (энциклопедия в 2-х томах). Т. 1-2, М., 1988. 4. Основы религиоведения (учеб. Под общ. Ред. И. Н. Яблокова) М., 2005. 5. Религиоведение, (учеб. Под общ. Ред. М. М. Шахнович), СПб, 2007.		

0202/B01	Մշակութաբանություն	2 կրեդիտ
շաբաթական 2 ժամ	32/0/0	
III կիսամյակ	ստուգարք	
Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և մշակույթ՝ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.		

Գիտելիք և իմացություն

- գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների ըմբռնումը

Ունակ կլինի.

✓ (բուն մասնագիտական կարողություններ)

- կիրառելու մշակույթի բաղադրիչները, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները,

✓ (ընդհանրական կարողություններ)

- օգտագործելու ընդհանուր գիտելիքները համաշխարհային և հայ մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունների վերաբերյալ:

Համառոտ բովանդակությունը

